

ԵՍ ԿՈՐՍՈՒԹԻՄ ՄԱՆԿՈՒԹԵՐԵՆ

Իմ կորսուած մանկութիւն, երբեմն այնքան ես աղուոր,
Այնքան բարի՛, մտերիմ, երբ կը դառնաս հեռաւոր
Քու անցեալէն, ու երկչոս՝ քեւերդ զոյգ՝ լայնօրէն
Դուն կը բանաս, կը նայիս յետոյ կեցած պահ մ'այդպէս
Աչքերու՝ խոր, ու յանկարծ կը նետուիս գիրկս խնկրի պէս:

Ու պահ մը լուռ, զօրաւոր փարած կուրծքիս կը սեղմեմ
Քեզ հոգեւին, մինչ կ'առնես աչքերդ վեր մերք ընդ մերք,
Երբ կը բանայ մասներուս գգուանին օտար՝ մազերուդ
Ոսկի արտին մէջ հարուս՝ սիրոյ խորունկ աղօսներ:
Դուն կը ժպտիս, կը փրլի սակայն բան մը իմ ներսէս:

Զի հիմա վին մը խորունկ մեզ յաիսեան իրարմէ
Ալ կը բաժնէ իմ անդարձ, ստուերացած մանկութիւն,
Յերբու վինն այդ լեցնել հիմա իզուր կը փորձենք,
Երբ զայն ծածկելն իսկ աչէն կը դառնայ նիզ մ'ապարդիւն:
Հեռուէ՛ն, հեռուէ՛ն դուն կ'անցնիս, երազի պէս նըմայուն...:

Իմ կորսուած մանկութիւն, քեզ զսնելու համար ես,
Պիտի սիրով, անվարան տամ ինչ որ օր մ'ինձ տուին՝
Փորձառութեան, գիտութեան համբով՝ անցնող տարիներն,
Աղուոր ամէն բան՝ որ դեռ աչքես իրենց են պահեր.
Տղուն համար որ երկնի կ'ուզէր կապույտ բռնել...:

Նիկոսիա

Վ.Ա.ԷՐԱՄ ՄԱՎԵԱՆ

